## ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

**Ս. Էջմիածին**

Ձերդ Սրբություն,

Ձեր ութսունամյակի օրը ընդունեցեք ամենաջերմ շնորհավորանքներ կառավարական բարձր պարգևի՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի առթիվ: Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և երկար տարիների կյանք՝ ի փառս մեր սոցիալիստական հայրենիքի և ողջ հայ ժողովրդի:

Մենք բարձր ենք գնահատում Հայ Առաքելական Եկեղեցու ղեկավարի պաշտոնում Ձեր ունեցած գործունեությունը, Ձեր սատարումը սովետական պետության ներքին և արտաքին քաղաքականությանը, ինչպես նաև Ձեր անձնական ներդրումը համայն աշխարհի խաղաղության համար մղվող պայքարում:

Խորին հարգանոք՝

**ԽԱՐՉԵՎ**
ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա,
19 սեպտեմբերի 1988 թ.